

Չովաշենն արդեն ունի կահավորված ու ջեռուցվող համայնքային բացառիկ կենտրոն

03.12.2019

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր ներկա է գտնվել Ակունք խոշորացված համայնքի բարձրլեռնային Չովաշեն բնակավայրի համայնքային կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը:

Կենտրոնի բացումն իրականություն է դարձել տարածքային կառավարում-տեղական ինքնակառավարում-սփյուռք եռակողմ արդյունավետ գործակցության արդյունքում:

«Լինելով բարձրլեռնային բնակավայր ու չունենալով որևէ կրթական հաստատություն (այստեղ մի քանի տարի առաջ դպրոցը փակվել է, 7 աշակերտները դպրոց են հաճախում Հատիսում)՝ Չովաշենը նման կենտրոնի կարիք իսկապես ուներ: Այստեղ 6-7 ամիս ձմեռ է, բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, իսկ երեխաները դպրոցից հետո ինքնակրթությամբ զբաղվելու ու պարզապես միմյանց հետ շփվելու որևէ հարթակ չունեին: Այս ծրագրի իրականացմամբ մենք լրացրեցինք այդ բացը և մեկ քայլով ավելի մոտեցանք մեր՝ բնակչի վերափոխումը քաղաքացու տեսլականի իրականացմանը:

Սփյուռքում բնակվող մեր հայրենակից Թագուհի Օհանյանի գլխավորությամբ ուզում ենք ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնել մեր բոլոր այն հայրենակիցներին (և ոչ միայն), ովքեր իրենց լուման են ներդրել այս լուսավոր ծրագրում: Նշեմ, որ համայնքային կենտրոնը գործում է անվճար հիմունքներով: Սենյակներն ամբողջովին կահավորված են ու ջեռուցվում են: Կենտրոնում կա հանդիսասրահ, փոքրիկների համար նախատեսված դասապատրաստման սենյակ, որն, ի դեպ, կրում է լեգենդար «Սասունցի Դավիթ» ջոկատի հրամանատար Աշոտ Մանուկյանի անունը», -իր խոսքում նշել է մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը:

Նշենք, որ սենյակներին կից գործում է գրադարան, որն արդեն համալրված է բազմաթիվ գրքերով:

Մարզպետը նույնպես գրադարանին նվիրաբերեց մի քանի հետաքրքիր գրքեր, որոնք կզարգացնեն ու կընդլայնեն փոքրիկների աշխարհայացքը:

Կենտրոնում իրենց հանգստի սենյակն ունեն նաև ավագ սերնդի ներկայացուցիչները, ովքեր արդեն իսկ նարդի և շախմատ էին խաղում: